Արտակ Ս. Սարգսյան

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՐՔԱ ԹՈՒԿՈՒԼԹԻ–ՆԻՆՈՒՐՏԱ Ի–Ի (Ք. Ա. 1243–1207 ԹԹ.) ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿՈՒՏԻ, ՇՈՒԲԱՐԻ ԵՎ ՆԱԻՐԻ*

Բանալի բառեր–Նաիրի երկրներ, Կուտի երկիր, Շուբարի երկիր, Նիխրիյայի ճակատամարտ, Կատմուխի (Կադմյան Ծավդեք), Ալզի–Աղձնիք, Տեբուրգի–Դերսիմ, Հայասա–Ազզի, Մուզուրի լեռներ, Եփրատի ավազան, Մական (Մագնանա, Մաչկան), Վերին ծով, Մուսրու–Արինի (Միջաս, Արին):

Իր գահակալության առաջին տարում[1] Ասորեստանի արքա Թուկուլթի–Նինուրտա Ի–ի կուտիների, շուբարեցիների և Նաիրի երկրներ կատարած արշավանքի երթուղին դեռևս ամբողջապես հստակեցված չէ[2]: Այդ արշավանքի վերաբերյալ Թուկուլթի–Նինուրտա Ի–ը թողել է շուրջ երկու տասնյակ արձանագրություններ[3], որոնց տեղեկությունների համադրությունը, ընդհանուր առմամբ, արշավանքի իրադարձությունները պատկերում է հետևյալ կերպ. կառավարման առաջին տարում Թուկուլթի–Նինուրտա Ի–ը Թուլսինա[4] լեռներից Ստորին Զաբի ավազանով արշավում է Շասիլա–Մաշխաթ–շարրի[5]

*Հոդվածն ընդունվել է տպագրության 16.05.2019:

1 Թուկուլթի–Նինուրտա Ի–ը գահակալել է Ք. ա. 1243–1207 կամ 1233–1197 թթ. (տես **Streck M.,** Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, De Gruyter, 2014–2016, էջ 176):

2 Խնդրին անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ (**Forrer E.**, Reallexikon der Assyriologie, I, Berlin und Leipzig, 1928, էջ 268–271, **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 52, **Меликишвили Г.**, Наири–Урарту, (Н–У), Тбилиси, 1954, էջ 13–14, **Манандян Я**., О некоторых проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, էջ 15–16, **Арутюнян Н.**, Биайнили (Урарту), Ереван, 1970, էջ 21–29, **Хачатрян В**., Хайасцы, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1972, N 8, էջ 32–41, Նույն հեղինակի, Хайаса и Наири, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1973, N 11, էջ 37–47, Նույն հեղինակի, Наири и Армина, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1976, 8 (59), էջ 59–72, **Головлева Л.**, Царство Алзи во второй половине II тыс. до н.э., «Древний восток», Ереван, 1978, N 3, էջ 71–87, **Քոսյան Ա.**, Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա XIII դարի երկրորդ կեսին, ՊԲՀ, N 2–3, Եր., 1999, էջ 222–231, Նույն հեղինակի, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր., 1999, էջ 19–20, 73–76, 155–157, **Սարգսյան Դ.**, Դայաենի–Դիաուխի պետության գրված տարածքը և բնակչության հայկական ծագումը, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2003, N 2, էջ 168–170, **Paiva D**., A expansão meso-assíria no reinado de Tukulti-Ninurta I, (Dissertação de Mestrado em História-Especialização em Civilizações do Médio Oriente e Ásia Antiga), 2012, **Streck M.**, Reallexikon der Assyriologie, էջ 176–178 և ուրիշներ):

3 Տես **Grayson A**., Assyrian Rulers of the third and second millennia BC (to 1115 BC), (The Royal inscriptions of Mesopotamia. Assyrian periods, v. 1), University of Toronto Press, 1987, Printed in Canada, Reprinted 2002, 1–10, 13, 16, 18, 20–21, 23–24, 26, 1001 էջ 231–292: **Дьяконов И.**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, (АВИИУ), ВДИ, N 2, 1951, 3–9:

4 Ի. Դյակոնովը այս քաղաքը հիշատակում է Դարսինա տարբերակով (տես, օր. АВИИУ, 4),

5 Ի. Դյակոնովը այս քաղաքը հիշատակում է Բարնանիշ տարբերակով (տես, օր. АВИИУ, 4):

քաղաքներ–Սուկուշկի–Լալար լեռներ երթուղով՝ դեպի Կուտի ընդարձակ երկիրը: Այստեղ, Յաուրի (յաուրիների) լեռներում[6], ասորեստանցիները բախվում են բաբխեցիների (տարբերակ՝ կուտիների)[7] և ուկումանեցիների հետ և նրանց հաղթում: Այնուհետև Թուկուլթի–Նինուրտա I–ը գրավում է վերջիններիս բազմաթիվ բնակավայրերը, գերում Ուկումանիի արքա Աբուլեին և նրանց իշխաններին, տանում Աշշուր, հավատարմության երդում ստանում, վերադարձնում իրենց երկիրը՝ դարձնելով հարկատու[8]:

Շարունակելով առաջխաղացումը՝ արքան գրավում է Էլխունիա և Շարնիդա երկրները՝ մինչև Մեխրի[9]: Այստեղ կուտիների հնազանդեցված զինվորների միջոցով կտրել է տալիս մեծ գերաններ և Մեխրիից տեղափոխում Աշշուր՝ իր նոր պալատի կառուցման համար[10]: Այնուհետև, ասորեստանցիները տիրանում են նաև Բաբխի (Պապխի) երկրին՝ ողջ ընդարձակ Կուտի երկիրը համարելով գրավված[11]:

Նույն տարում Թուկուլթի–Նինուրտա I–ը մտնում է Կատմուխի՝ պատճառաբանելով, որ այս երկրի 4 քաղաքները հարստանում են իրենց տաճարն ու ժողովրդին թալանելով: Հարվածում է նրանց բնակավայրերին ու սրբավայրերին, գրավում ողջ երկիրը, գերում նրանց իշխանավորներին: Ողջ Շուբարին, Քաշիյարիի ամբողջ շրջանը մինչև Ալզի (Իլզի), որ դեռ Սալմանասար I–ի ժամանակից դադարել էին հնազանդվել, միավորել էին իրենց ուժերը՝ ընդդեմ Թուկուլթի–Նինուրտա I–ի: Ասորեստանյան զորքն անցնում է Քաշիյարի շրջանը, վերահսկողություն հաստատում և սանձում Շուբարի երկիրը, Ալզի երկիրը ու նրանց դաշնակից թագավորներին[12]: Ըստ հիշատակություններից մեկի՝ Կուտիից հետո ասորեստանյան զորքը գրավել է Քաշիյարի լեռների ողջ շրջանը մինչև Կումմուխու երկիրը[13]: Քաշիյարիից և Կատմուխիից ասորեստանյան զորքերը Ալզի են շարժվում Մումմի և Բուշշե (Պուշշե) երկրներով[14], նվաճում Ալզի երկրի չորս հզոր մայրաքաղաքները և Մադանի (Ամադանի) երկրի 6 ամրոցները՝ գերիներին և նրանց գույքը տեղափոխելով Աշշուր: Ճակատամարտում պարտություն կրելով՝ Ալզիի արքա Էխլի–Թեշուբը, իր ծառաների ու որդիների հետ միասին, փախչում է Նաիրի երկիրը, իսկ նրա բանակի մնացորդները, որոնք փախել էին պատերազմից, ապաստան են գտնում լեռներում: Ալզիից ասորեստանյան զորքն անցնում է Մադանի, Նիխանի, Ալայա, Տեբուրզի (Տեպուրզի), Պուրուլումզի (Պուրուլիմզի) երթուղով, հնազանդեցնում այդ երկրները,

6 Ա. Գրեյսոնի մոտ տրանսկրիպցիայի մեջ ակնհայտորեն երևում է Յաուրիի հիշատակությունը (**Grayson A.,** Assyrian Rulers..., 23, էջ 272), սակայն անգլերեն թարգմանության մեջ այն բացակայում է: Ի. Դյակոնովի մոտ այս հատվածի թարգմանությունը հստակ է (АВИИУ, 6):

7 Տե՛ս **Grayson A.**, Assyrian Rulers..., 23, էջ 272: Նույն տեղում, 24, էջ 275–276: АВИИУ, 6: АВИИУ, 6, 7:

8 Տե՛ս նույն տեղում, 1, էջ 234–237:

9 Տե՛ս նույն տեղում, 24, էջ 275–276: АВИИУ, 7: Այս հիշատակությունը կրկնվում են նաև այլ արձանագրություններում:

10 Տե՛ս նույն տեղում, 1, էջ 235:

11 Տե՛ս **Grayson A.**, Assyrian Rulers..., 24, էջ 275–276: АВИИУ, 7: Հիշատակությունները փաստում են, որ Յաուրի լեռներում ասորեստանցիները բախվել են կուտիական երկրներ Բաբխիի և Ուկումանիի միացյալ զորքի հետ: Հաղթելուց հետո, ասորեստանցիները շարժվել են հյուսիս՝ մինչև Էլխունիա, Շարնիդա, Մեխրի և մտել նաև Բաբխի, այնուհետ՝ Կատմուխի:

12 Տե՛ս **Grayson A.**, Assyrian Rulers....,1, էջ 235–236:

13 Տե՛ս նույն տեղում, 9, էջ 251: **Арутюнян Н.**, Биайнили (Урарту), էջ 25–26:

14 Քաշիյարիի շրջան ասորեստանցիները մտել են Կատմուխիից, իսկ Ալզի են հասել Կատմուխի–Մումմի–Բուշշե երթուղով: Սա ցույց է տալիս, որ Քաշիյարիից ասորեստանցիները վերադարձել են Կատմուխի, այնուհետև շարժվել Ալզիի ուղղությամբ:

ավերում 180 քաղաքներ, նրանցից պատանդներ վերցնում. այսպիսով գրավում է ողջ Շուբարի ընդարձակ երկիրը և կցում իր երկրին: Պուրուլումզիում նա գրավում է այդ երկրի պաշտամունքային մեծ կենտրոնը, կենդանի այրում բնակիչներին և գերի վերցնում նրանց բանակի մնացորդները[15]:

Պուրուլումզիից Աշշուրի զորքերը հաղթահարում են ինչ-որ դժվարանց անհայտ լեռներ և մտնում հեռավոր Նաիրիի երկրների տարածք[16], հասնում Եփրատի ավազան[17], գրավում Ազալզի (Աշալզի) և Շեբարդի (Շեպարդի) երկրները՝ կցելով իրենց երկրին[18], հասնում են մինչև Մական երկրի սահմանը[19], հնազանդեցնում և հարկատու դարձնում նաև Վերին ծովի ափին ընկած ինչ-որ երկրներ[20]: Նաիրիի երկրների 40 (43) արքաները միացյալ բանակով ճակատամարտում են ասորեստանցիների դեմ[21], պարտություն կրում, գերվում, տեղափոխվում Էկուր մեծ լեռան սրբավայրը, հնազանդություն հայտնում՝ դառնալով հարկատու[22]: Ասորեստանի հարկատու երկրներից էին նաև Դամնաուշը, Արիննան, Բիրիտուն[23]: Արշավանքի ընթացքում ասորեստանյան զորքերը մտնում են նաև բուն խեթական տարածքները և

---

15 Տես **Grayson A.,** Assyrian Rulers...., 1, էջ 236:

16 Տես նույն տեղում, 5, էջ 244:

17 Արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում է, որ ասորեստանյան զորքերը հասել են Եփրատի ավազան՝ մեկ դեպքում ողջ Շուբարին գրավելուց հետո (տես **Grayson A.**, Assyrian Rulers....,9, էջ 251), այլ դեպքերում՝ Շուբարիից հետո՝ Նաիրիի և Մական երկրի հետ միասին (տես նույն տեղում, 1, էջ 234-237, 2, էջ 240, 8, էջ 250, 10, էջ 252), երրորդ պարագայում՝ Խաթթիի տարածք ներխուժելու ժամանակ (տես նույն տեղում, 23, էջ 272, 24, էջ 275-276: АВИИУ, 6, 7): Ստացվում է, որ ասորեստանցիները երկու տարբեր հատվածներում են հատել Եփրատը՝ մեկը Շուբարին գրավելուց հետո՝ Նաիրի ներխուժելով, մյուսը, հավանաբար, Նաիրիից վերադառնալու ճանապարհին՝ Խաթթի ներխուժելով:

18 Տես **Grayson A**., Assyrian Rulers..., 6, էջ 247, 18, էջ 266: АВИИУ, 5:

19 Մական երկիրի սահմանը հասնելու վկայությունը մշտապես հիշատակվում է Նաիրիից հետո, հաճախ, որպես նվաճումների վերջնագիծ (**Grayson A.**, Assyrian Rulers..., 1, էջ 237, 2, էջ 240, 3, էջ 241, 8, էջ 250): Օր., բանաձևումներից մեկում նշվում է «...կործանողը Կուտիի իշխաններին մինչև Մեխրի երկիրը, ցրողը Շուբարի երկրի ուժերի և հեռավոր Նաիրի երկրների մինչև Մական երկրի սահմանը...» (նույն տեղում, 13, էջ 257, 16, էջ 262):

20 Հիշատակություններից մեկում Թուկուլթի-Նինուրտա I-ը նշում է, որ Աշշուր քաղաքում մշտապես ստացել է Նաիրիի 40 երկրների և Վերին ծովի ափին ընկած երկրների կանոնավոր հարկը (տես **Grayson A.**, Assyrian Rulers..., 4, էջ 243): Մեկ այլ արձանագրությունում Աշշուրի տիրակալն իրեն կոչում է «....Վերին և Ստորին ծովերի արքա....Շուբարի երկրի, Կուտիի և Նաիրիի բոլոր երկրների արքա...» (նույն տեղում, 5, էջ 244): Մեկ այլ տեղ Ասորեստանի արքան նշում է, որ Աշշուրն իրեն ուղարկել է Նաիրի երկրները և Վերին ծովի ափի երկրները: «Նաիրիի բոլոր երկրները և երկրները, որ գտնվում են ափին (.....) Վերին ծովի», նա հաղթել է, ենթարկել իրեն, դարձրել հարկատու և նրանց ընծաները ստացել Աշշուր քաղաքում (նույն տեղում, 26, էջ 279: АВИИУ, 9): Նաիրի երկրի, Մական երկրի և Վերին ծովի հիշատակությունների տրամաբանությունը ցույց է տալիս, որ Մական երկիրը, ամենայն հավանականությամբ, Վերին ծովի ափին էր և Ասորեստանի արքան հասել էր այդ երկրի հարավային սահմանին՝ սպառնալով Վերին ծովի ափի երկրներին: Վերջիններս, հավանաբար, խուսափելով ներխուժումից, հնազանդություն են հայտնել՝ դառնալով հարկատու:

21 Տես **Grayson A.**, Assyrian Rulers..., 5, էջ 244, АВИИУ, 3: Ի. Դյակոնովը Նաիրիի արքաների թիվը 43 է նշում, (АВИИУ, 3, 5, 6, 7), իսկ Է. Վեյդները՝40 (տես **Арутюнян Н.**, Биайнили (Урарту), էջ 25, ծան. 59). այդ տեսակետին է նաև Ա. Գրեյսոնը:

22 Տես **Grayson A**., Assyrian Rulers..., 23, էջ 272:

23 Տես նույն տեղում, 23, էջ 272: АВИИУ, 6: **Դամնաուշը** նույնական է ավելի ուշ հիշատակվող Դամդամուսային՝ Ամիդից հարավ-արևելք (**Սարգսյան Ա.**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, ՄՄԱԵԺ, XIX, Եր., 2000, էջ 141, ծան. 28): **Արիննի** երկիրը Ուրուատրիի կենտրոն Մուսրու երկիրն է՝ Արինու մայրաքաղաքով, որը ընդգրկում էր Մկքի Միջաս գավառը՝ մերձակա տարածքներով, գուցե և ողջ Մկքը (**Սարգսյան Ա.**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, էջ 140-152): Արինու քաղաքը գտնվում էր Խարուսա-Առնոս լեռան փեշերին, Թալա-Թաղից (ժամանակակից՝ Շատախ) ոչ հեռու: Այն համադրելի է Արին բնակավայրին, որը, ըստ 1910 թ. կազմված Բրիտանական տոպոգրաֆիական քարտեզի, գտնվում է Առնոս լեռան հարավային փեշերին, Շատախ գետի աջ ափին: Այն կարող էր լինել նաև Միջաս բնակավայրը, որը այդ շրջանում հնարավոր է կոչվեր Արինու: Հետաքրքիր է, որ Արինից հարավ, Շատախ գետի ձախակողմյան վտակներից մեկի ձյուղավորումը կրում է Մասարու չայ անունը, որը, հավանաբար, ժառանգվել է Մուսրուից: **Բիրիտուն**, հավանաբար, ավելի ուշ հիշատակվող Նիրտուն է՝ Տեղրիտի շրջանում, Տիգրիսի միջին հոսանքում (АВИИУ, 6 (ծան. 9)):

«Եփրատի այն կողմից»[24] գերում 28.800 խեթական ռազմիկների[25]: Այս նվաճումների արդյունքում Թուկուլթի-Նինուրտա I-ը իրեն համարում է «....Վերին և Ստորին ծովերի արքա....Շուբարի երկրի, Կուտիի և Նաիրիի բոլոր երկրների արքա...»[26], ինչպես նաև «...կուտիների կառավարիչներին կործանող, շուբարեցիների և Նաիրի երկրներին վանող արքա...»[27]:

Արշավանքի երթուղու վերաբերյալ ուսումնասիրողները հանգել են երկու ընդհանրական մոտեցումների: **Ըստ առաջին մոտեցման՝ ասորեստանյան զորքը հասել է Արմ. Տիգրիսի ավազան և հաղթահարել Հայկական Տավրոսի գիծը՝ շարժվելով հյուսիս[28]: Ըստ երկրորդ մոտեցման՝ Արմ. Տիգրիսի վերին ավազանից ասորեստանյան բանակը շարժվել է դեպի արևելք, Վանա լճի հարավային շրջաններով հասել Մեծ Զաբի վերին ավազան, Զագրոսյան լեռներով իջել հարավ՝ վերադառնալով Ասորեստան**[29]:

Այս մոտեցումներում հատկապես խնդրահարույց է Նաիրիի տեղադրությունը, որի շուրջ ուսումնասիրողները հանգել են երկու հիմնական տեսակետների՝ 1. Նաիրին տեղադրելով Վանա լճի ավազանում՝ վերջինիս և Ուրմիա լճի միջև[30], 2. Նաիրին տեղադրելով Ծոփքում կամ նրա հարևանությամբ՝ Վերին Եփրատի ավազանում, Արածանիի և Սև ծովի միջնատարածքում, որտեղ խեթական աղբյուրները հիշատակում են Հայասա-Ազզի երկիրը[31]:

---

24 Ա. Գրեյսոնը նշում է «Սիրիայից», միաժամանակ փաստելով, որ արձանագրությունում բառացի գրված է «Եփրատի այն կողմից» (**Grayson A.**, Assyrian Rulers..., 23, 24, էջ 272, 275):

25 Տե՛ս նույն տեղում, 23, էջ 272: АВИИУ, 6:

26 Նույն տեղում, 5, էջ 244:

27 АВИИУ, 8:

28 Այս տեսակետին են, օր., Է. Ֆորրերը, Ի. Դյակոնովը, Վ. Խաչատրյանը, Դ. Սարգսյանը:

29 Ն. Հարությունյանը, օրինակ, գտնում է, որ Թուկուլթի-Նինուրտա I-ի զորքերը սկզբնապես անցել են Մոսուլ-Զախո ճանապարհով, գետանցել Արևելյան Խաբուրը, ճամփա բռնել հյուսիս՝ Ջեզիրե, Շերնախ, Էրուխ գծով՝ մինչև Բոհտան գետը: Այնուհետև, հավանաբար, շարժվել են հարավ-արևմուտք, գետանցել Տիգրիսը, այդ գետի աջափնյակով իջել են հարավ և Գերջյուշ-Միդյատ-Սավուր ճանապարհով հայտնվել Մարդինում: Այստեղից ասորեստանյան զորքը, հնարավոր է, շարունակել է ճանապարհը հյուսիս-արևմուտք, մինչև Դիարբեքիր: Այնուհետև, գետանցելով Տիգրիսը, Սիլվան-Գարզան-Բիթլիս ճանապարհով և Վանա լճի հարավային մասերով, նրանք հասել են մինչև Խոշաբ, իսկ այդտեղից Բաշկալայով, Գևարով, Շամիդինանով և լեռնային Զագրոսի կիրճերով հասել Ուշնու: Արշավանքի վերջնամասը, ըստ նույն հեղինակի, հավանաբար, անցել է Սակիզով՝ Ուրմիա լճի հարավային մասը: Այս մոտեցմամբ, Նաիրին տեղակայվում է Վանա լճի ավազանում՝ տարածվելով նրանից արևելք՝ մինչև Ուրմիայի արևմտյան ափերը: Ինչ վերաբերում է Քաշիյարիին, Կումմուխուին (Կոմմագենե), ապա ենթադրվում է, որ դրանք կարող էր գրավել ասորեստանյան այլ զորաջոկատ: Այն կարող էր անջատվել դեպի Նաիրի արշավող հիմնական ուժերից, Կումմուխուն գրավելուց հետո, շարժվել հյուսիս-արևելք և Տիգրիսի ակունքների մոտակայքում միանալ հիմնական ուժերին՝ Նաիրին գրավելու նպատակով (**Арутюнян Н.,** Биайнили (Урарту), էջ 25-26):

30 Առնվազն Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1077 թթ.) ժամանակից սկսած՝ Նաիրի անունով բնորոշվել է գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհը՝ Մեծ Զաբի վերին շրջանից մինչև Տայք, Բարձր Հայք, Մալաթիա և Հյուսիսային Միջագետք՝ կենտրոնում ունենալով Վանա լիճը, հարավում՝ Ուրմիա լիճը: Ուրարտուի տիրակալներն իրենց անվանում էին նաև Նաիրիի արքաներ: Նեղ առումով, Նաիրին՝ հնագույն Խաբխիի տարածքում՝ Ք.ա. IX-VII դդ. ձևավորված Խուբուշկիայի թագավորությունն էր՝ համանուն մայրաքաղաքով (հավանաբար, համապատասխանում է Ջուլամերկին): Այս հանգամանքներից ելնելով, բազմաթիվ ուսումնասիրողներ Թուկուլթի-Նինուրտա I-ի հիշատակած Նաիրին ևս տեղադրել են Վանա և Ուրմիա լճերի միջնատարածքում (Մելիքիշվիլի Գ., Հարությունյան Ն., Պաիվա Դ., Ստրեք Մ. և ուրիշներ):

31 Է. Ֆորրերը Թուկուլթի-Նինուրտա I-ի հիշատակած Նաիրին տեղակայում է Իշուվա-Ծոփքում՝ Արածանիի հովտում: Ըստ Ի. Դյակոնովի՝ ասորեստանյան վաղ շրջանի աղբյուրներում «Նաիրի երկրների» ներքո հասկացվել են Հայկական Տավրոսից հյուսիս ընկած ցեղերը, իսկ ուշ շրջանի հիշատակություններում՝ Տիգրիսի վերին ավազանի երկրները, նույնիսկ՝ բուն ասորեստանյան տարածքներից արևելք ընկած շրջանները (АВИИУ, 3, ծան. 8): Վ. Խաչատրյանը Նաիրին նույնական է համարում Հայասա-Ազզի պետության հետ՝ տեղադրելով Հայկական Տավրոսից և Վանա լճից հյուսիս: Դ. Սարգսյանը գտնում է, որ Նաիրի ցեղամիության տարածքը հյուսիսում հասել է մինչև Սև ծով, հարավում՝ Արածանի գետ, արևելքում՝ Ճորոխ գետի ավազան, արևմուտքում՝ վերին Եփրատ (Մալաթիայի դիմաց):

Արշավանքի երթուղին հստակեցնելու համար անդրադառնանք հիշատակվող տեղավայրերի տեղադրությանը:

Ուկումանի-Կումանի երկիրը գտնվում էր Խեզիլ և Արլ. Խաբուր գետերի միջև՝ ընդգրկելով նաև Մ. Զաբի՝ Ամադիայից հարավ ընկած որոշ տարածքներ: Նրա թագավորական քաղաքը Կիպշունա-Գեֆշեն էր: Կրոնական կենտրոններից էր Կումմե-Կումենու՝ ներկայիս Կոմանա բնակավայրը՝ Վերին Զաբի աջափնյակում, Ամադիայից 9 կմ հարավ-արևելք[32]: Ուկումանի-Կումանի երկրի հյուսիսային սահմանը, հավանաբար, հասնում էր մինչև Մեխրի, որը հայոց Մեհրի-Նար լեռն է[33]: Ուկումանեցիները դաշնակցում էին Մուսրու երկրի հետ[34], որը համապատասխանում է Մոկքի Միջա (Միջաս) գավառին կամ ողջ Մոկքին[35]: Ուկումանին և Մուսրուն, հավանաբար, միմյանցից անջատված էին Ներքին Խաբխի երկրով: Կումանիի սահմանը հարում էր նաև Սալուա (ներկայիս՝ Սուլի բնակավայր)[36] երկրին[37]: Այն հյուսիս-արևելքից և արևելքից սահմանակցում էր նաև Խաբխի երկրին[38]:

Կուտին՝ կուտիների երկիրը, Ք.ա. III հազարամյակից հայտնի Գուտիումի ժառանգորդն էր[39]: Նեղ առումով Կուտին երկրի կենտրոնական շրջանն էր, լայն առումով՝ այդ կենտրոնական շրջանի՝ քաղաքական իշխանության տարածման արեալը[40]: Բուն Կուտին նույնական է հին հայոց Կորճայք նահանգի կենտրոն Կորդուք, գուցե և Ներքին, Միջին և Վերին Կորդրիք (Տմորիք) գավառներին[41]: Ք. ա. 14-9-րդ դդ. հիշատակվող կուտիների երկիրն ընդգրկում էր Մեծ Հայքի Կորճայք, Մոկք նահանգների տարածքը, Աղձնիք աշխարհի արևելյան շրջանները: Այդ տարածքը մոտավորապես համապատասխանում է նույն ժամանակահատվածում հիշատակվող Ուրուատրի ընդարձակ երկրին և նրան մերձակա տարածքներին[42]: Կուտին հայոց

32 Տես **Арутюнян Н.**, Топонимика Урарту, (ТУ), Ереван, 1985, էջ 119-120:
33 Տես ТУ, էջ 143-144:
34 Տես АВИИУ, 10 (VI, 73):
35 Տես **Սարգսյան Ա.**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, էջ 140-152:
36 Տես **Манандян Я.**, О некоторых проблемах истории и географии древней Армении, էջ 8:
37 Տես АВИИУ, 11, 12, 21 :
38 Տես նույն տեղում, 21:
39 Նույն տեղում, 1 (ծան. 4): Կուտին ուսումնասիրողները տեղադրում են՝ ա) Կորդվաց լեռների շրջանում, Վանա և Ուրմիա լճերի միջնատարածքում, նույնացնում Կորդուքի և ողջ Կորճայքի հետ, բ) Տիգրիսի, Փոքր Զաբի, Դիալայի և Սուլեյմանիե լեռների շրջագծած տարածքում, գ) Զագրոսյան լեռներում՝ ինչ-որ տեղ, դ) Զագրոսի հյուսիսում, Ուրմիա լճի ավազանում, ե) Հայկական լեռնաշխարհում՝ ընդհանրապես, նույնացնելով շումերական աղբյուրներից հայտնի Արատտա երկրին, Ուրարտուին: Ըստ տեսակետներից մեկի՝ հնագույն գուշակություններում Գուտիում ասելով հասկացվել է Ուրարտուն, Մանա երկիրը, Մեդիան: Կուտի անունը կապում են նաև հայոց «Խույթ» երկրանվան հետ (ամփոփ տես, օրինակ, **Մովսիսյան Ա.**, Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, Եր., 1997, էջ 4, նաև՝ գրականության հղումները (ծան.1-5), էջ 20-21: Նույն հեղինակի, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Եր., 2005, էջ 43-48, աղբյուրները՝ Հավելվածում, էջ 104-167):
40 Կուտիները հայոց Կորդուքի և Մոկքի հնագույն տերերն էին: Հավանաբար, Ք.ա. III հազարամյակի կեսերին նրանք իրենց իշխանությունն են տարածել Արևմտյան Տիգրիսի ավազանից մինչև Մ. Զաբի վերին ավազան՝ ծավալվելով հարավ, մինչև Պարսից ծոց: Նրանք մեծ համբավ ունեին Հին Արևելքում, որպես ռազմատենչ ժողովուրդ, որի տիրակալները շուրջ 100 տարի նստեցին նաև Շումերի և Աքքադի գահին: Կուտիները էթնոմշակութային ընդհանրություններ ունեին Հայկական լեռնաշխարհի բնակչության հետ և սեմական հարավի համար ոչ սեմական հյուսիսը երբեմն բնորոշվել է նաև «Կուտիների երկիր»: Հյուսիս արշավելով Միջագետքի տիրակալները բախվում էին հենց այդ հզոր երկրի ու ժողովրդի հետ, որոնց Քսենոփոնը հիշում է «կարդուխներ» անունով:
41 Որ բուն Կուտին Կորդուքն ու Կորդրիքներն են, լավագույնս երևում է «Կուտի»-ից բխող տեղանունների առատությամբ՝ Կորդուք, Կո(ր)դրիք, Ջուդի, Կորտիճայք, Կադմոսի Տուն: Նույն արմատից է նաև Կադմուխի-Կատմուխի-Կուտմուխին:
42 Կուտին համապատասխանում է Արատտա-Ուրուատրի-Արարադի երկրին. վերջինս հայոց ազգածնության առասպելի առաջին երկիրն է, ուր Բաբելոնից հյուսիս շարժվելով հաստատվում է Հայկ նահապետը: Եթե նկատի ունենանք, որ հայոց նախահայրն Արարադի երկիրը, որպես ժառանգություն, թողնում է թոռան՝

Կադմոսի Տունն է, իսկ Կատմուխին, որն ուսումնասիրողների կողմից հաճախ է նույնացվում վերջինիս հետ, ևս կուտիական երկիր էր՝ համապատասխանելով Կադմյան Ծավդեքին: Այս երկրի անունով ողջ Հայկական լեռնաշխարհն որոշ դեպքերում բնորոշվել է Գուտիում, կուտիների երկիր[43]: Թուկուլթի-Նինուրտա I-ը Կուտի ասելով նկատի ունի շուբարեցիների երկրից արևելք, մինչև Արևելյան Խաբուրի և Վերին Զաբի ավազանն ընկած Կորձայքի շրջանները: Իր գրված տարածքները նա բնութագրում է որպես կուտիների (ընդհուպ մինչև Մեխրի), շուբարեցիների և Նաիրի երկրներ[44]: Բաբխեցիներն ու կուտիները արձանագրություններում համարժեք են հանդես գալիս, Կատմուխին ևս, կարծեք, պատկանում էր կուտիական աշխարհին, սակայն շուբարիական գերիշխանության ներքո էր: Ահա այս երկու միջանկյալ երկրներից արևելք կուտիների շրջանն էր, իսկ դեպի արևմուտք՝ մինչև Եփրատի ավազան, տարածվում էր շուբարեցիների ընդարձակ երկիրը:

Ուկումանին, Կատմուխին, հավանաբար նաև Արիննին, ինչպես նաև Բաբխին դիտվում էին կուտիների ընդարձակածավալ երկրի մաս: Կուտին, ինչպես Շուբարին, ուներ բազմաթիվ արքաներ, կառավարիչներ: Դրանք դաշնակցային միավորներ էին:

Միջին ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող **Շուբարի երկիրը** ([KUR]Subari) ակնհայտորեն շումերական հիշատակությունների Subur[Ki] -ն է, աքքադական [KUR]Subartu-ն ավելի ուշ շրջանի [KUR]Subre, [KUR]Subria, [KUR]Subura-ն: Այս երկիրը, ընդհանուր առմամբ, տեղադրվում է Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան հատվածում: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ միջինասորեստանյան աղբյուրների շուբարեցիների տակ պետք է հասկանալ խուռիներին՝ Միտանիի (Խանիգալբատ) բնակիչներին[45]: Իսկ ավելի ուշ շրջանի Շուպրիան տեղադրվում է Սասունի լեռներում՝ Ֆումի, Քղիմարի և նրանց հարող շրջաններում[46]: Արտահայտված տեսակետներից մեկի համաձայն՝ շուբարեցիների երկիրը համընկնում է Արատտա, նաև Արմանի(ի/ում)-Արմի/ե երկրների հետ և Հայկական լեռնաշխարհին տրվող անվանումներից մեկն է[47]: Ակնհայտորեն, Սուբուրը հիշատակվում է մինչև Միտանիի գոյությունը՝ Ք.ա. 26-րդ դարից սկսած. կարելի է ենթադրել, որ Միտանի-Խանիբալբատը հետագայում՝ Ք.ա. II

Կադմոսի Տանը, ամեն ինչ առավել հասկանալի կլինի: Արարադի երկիրը ոչ թե Կորդվաց աշխարհում էր, այլ հենց Կորդուք-Կորձայքն էր: Այստեղ էր տապանակիր լեռը՝ Արարատ-Զուդի-դաղը: Ակնհայտորեն ունենք աղբյուրներում վկայված հետևյալ պատկերը. շումերական աղբյուրներում Ք.ա. III հազ. սկզբներից հիշատակված Արատտան հետագայում ինչ-ինչ պատճառներով ստանում է Կուտի անունը, որը ընդգրկում էր Կորձայքն ու հարող որոշ տարածքներ: Արատտան Ք.ա. XIII-IX դդ. ասորեստանյան սեպագրերում վերածնվում է Ուրուատրի-Ուրատրի անունով, որը կուտիական երկիր էր: Վերջիններս հայոց միջնադարյան հեղինակները հիշատակում են Արարադի երկիր անունով, որը ժառանգության է հանձնվում Կադմոսի Տանը: Փաստացի ունենք մի կողմից Արատտա-Ուրուատրի (Ուրատրի)-Արարադ, մյուսից՝ Կուտի (Գուտի)-Կորդուք (Կադմոսի Տուն, Կորձայք) համընկնումը միևնույն տարածքի համար՝ Մասիսուի և Նպատական լեռներից հյուսիս՝ մինչև Հայկական Տավրոսի գիծը՝ Մոկքի ներառմամբ, և Արևմտյան Տիգրիսի ստորին ավազանից մինչև՝ առնվազն Մ. Զաբի վերին ավազան:

43 Տես АВИИУ, 49 (309) (ծան. 79):

44 Տես նույն տեղում, 8:

45 Տես АВИИУ, 1 (ծան 6):

46 Տես ТУ, էջ 248-249:

47 Տես **Մովսիսյան Ա.**, Սրբազան լեռնաշխարհը, էջ 40-48: Սուբուր-Սուբարտու երկրի տեղորոշման հարցը՝ նույն հեղինակի, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 31-32, աղբյուրները՝ Հավելվածում, էջ 104-167:

հազ., տիրացել է Սուբուր-Սուբարտուի տարածքին և կոչվել նաև նրա անունով: Իհարկե, դրանից չի բխում, որ շուբարեցիներ ասելով պետք է հասկանալ խուռիներին միայն. այդ անվամբ նշվել է նաև Միտանիի ոչ խուռի բնակչությունը:

Ասորեստանի արքաներ Ադադներարի Ի-ի (Ք.ա. 1307-1275 թթ.)[48], Սալմանասար Ի-ի (Ք.ա. 1274-1245 թթ.)[49] և Թուկուլթի-Նինուրտա Ի-ի հիշատակությունների համադրումից ակնհայտ է, որ շուբարեցիները և կուտիները հարևան էին, և նրանց սահմանագիծը Տիգրիսների միախառնման շրջանից արևմուտք էր ձգվում: Շուբարեցիների տիրույթը տարածվում էր մինչև Բարձր Հայք՝ ընդգրկելով Արածանիի ստորին ավազանն ու Սասունի լեռնագավառը: Ավելի հյուսիս Շուբարիի տարածման վերաբերյալ ուղղակի փաստեր չկան: Ծոփքի և Աղձնիքի տարածքներից հյուսիս Հայասա-Ազզի կամ Նաիրիի շրջաններն էին:

Շուբարեցիների երկիրը, այսպիսով, պատմական որոշակի ժամանակաշրջանում, ընդգրկել է Հայկական բարձրավանդակի հետևյալ սահմանագծված տարածքները՝ Մասիսուի լեռներ (Քաշիյարի)-Տիգրիս գետ-Աղձնիք (Ալզի)-Ծոփք (Իսուվա, ներառյալ՝ Դերսիմը (Տեբուրզի), Մնձուր և Պաղին գետերի ավազանը (Պուրուլումզի))՝ մինչև Բարձր Հայքի սահմանները (Հայասա-Նաիրի): Հարավում շուբարեցիներ ասելով հասկացվել է նաև Հյուսիսիային Միջագետքը՝ Միտանի-Խանիգալբատի կենտրոնական շրջանները: Այս երկիրը ընդհանրապես կոչվել է նաև Շուբարտու, իր անվանական տարբերակներով: Շուբարեցիների հյուսիս-արևելյան հարևանը՝ Աղձնիք-Մոկք սահմանագծում, Մուսրու երկիրն էր՝ Ուրուատրիի կենտրոնական շրջանը[50]:

Կադմուխի-Կուտմուխի-Կատմուխին համապատասխանում է Կադմյան Ծավդեքին[51]: Նրա հարավային սահմանն անցնում էր Քաշիյարի-Մասիսուի լեռներով, հյուսիսայինը հասնում էր մինչև Արևմտյան Տիգրիս, արևելքում նրա սահմանը անցնում էր Տիգրիսով[52]: Կատմուխին սահմանակից էր Բաբխի, Ուրուատրի, Ալզի, հավանաբար վերջինիս մեջ մտնող Բուշշե և Մումմի երկրներին, հարավից՝ Քաշիյարի շրջանին (Տուր-Աբդինի լեռներ):

Բաբխին գտնվում էր Տիգրիսների միախառնման շրջանում[53], հավանաբար հասնելով մինչև Արզան-Սղերդ-Կեծանի ավազան սահմանագիծը՝ հյուսիսում, իսկ հարավում ընդգրկելով Կորդուքի հյուսիս-արևմտյան շրջանները: Այս երկիրն ու նրա տարածքն աղբյուրներում դիտվում է ինչպես շուբարիական, այնպես էլ կուտիական և ուրուատրիական:

Շարնիդայի և Էլխունիայի տեղադրությունն անհայտ է: Սակայն հասկանալի է, որ դրանք Կորձայքում՝ կուտիական աշխարհին պատկանող Մեխրի, Բաբխի, Ուկումանի, Կատմուխի երկրների մերձակայքում պետք է փնտրել: Չի բացառվում, որ Շարնիդան համապատասխանի Շիրնակին (Շարնախ, Շերնախ, Շերնակ) կամ Շահիդինան դաղին[54], իսկ Էլխունիան՝

48 Տես АВИИУ, 1:
49 Տես նույն տեղում, 2, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1 (ՀԺՊՔ), Եր. 1981, էջ 14-15:
50 Տես **Սարգսյան Ա.**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, էջ 140-141:
51 Տես Հայ ժողովրդի պատմություն, հատ. 1 (ՀԺՊ), պատ. խմբ. **Ս. Երեմյան**, Եր., 1971, էջ 283 (ծան.7):
52 Տես ТУ, էջ 98-99:
53 Տես նույն տեղում, էջ 50-51:
54 Այս լեռները գտնվում են Արլ. Խաբուրի վերին հոսանքի և Լևին-սուի միջև, պատմական Վերին Կորդրիքի

ժամանակակից Էրուհին (Էրուխ)։ Այս երկուսը, ակնհայտորեն, կուտիական երկրներ էին՝ տեղակայված Կորդուքում՝ Մեհրի Նարի մերձակա տարածքներում։

Յաուրի լեռները, որտեղ ասորեստանցիները բախվել են կուտիների (տարբերակ՝ բաբխեցիների) և ուկումանեցիների հետ, պետք է փնտրել Կորդուքի և Տմորիքի հարավային սահմաններում, Արևելյան Խաբուրից հարավ, Տիգրիսի և Մեծ Զաբի միջնատարածքում։ Ադադներարի I-ի հիշատակություններում յաուրիները հանդես են գալիս կուտիներից, Կատմուխի երկրից, ախլամուներից (արամեացիներից) և սուտիեններից հետո[55], որը հաստատում է մեր մոտավոր տեղադրությունը։ Էլխունիա (Էրուհ)-Շարնիդա (Շիրնակ-Շարնա՛խ)-Մեխրի (Մեհրի-Նար) սահմանագծին հասնելուց հետո, ասորեստանյան զորքը ներխուժել է Բաբխի՝ հավանաբար Կորդուքի հյուսիս-արևմտյան շրջանները։ Ապահովելով թիկունքն ու Կորդուքի տարածքը հենակետ ունենալով՝ ասորեստանյան զորքերն անցնել են Տիգրիսը, մտել Կատմուխի։ Կատմուխին նվաճելուց հետո ասորեստանցիներն անցել են Քաշիյարի լեռների շրջանը։ Ապահովելով հարավը և այն դարձնելով հենակետ՝ ասորեստանյան զորքը, այնուհետ, շարժվել է հյուսիս, մտել Բուշշե և Մուսմի երկրները։ Հաջորդ հարվածն ուղղվում է Ալզի-Աղձնիքին[56]։

Բուշշե (Պուշշի-Պուշշե) և Մուսմի երկրների տեղադրությանը գիտության մեջ հստակ լուծում չի տրվել։ Բուշշե-Պուշշեն Ն. Հարությունյանը համադրում է Շիրվանից հարավ-արևելք գտնվող ժամանակակից Բուշի-Բոշի հետ[57]։ Չբացառելով այս տեսակետը՝ առավել հավանական ենք դիտում Բուշշե-Պուշշիի համադրումը Բուշերիկ-Բշերիկի հետ, որը Դիարբեքիրի նահանգի գավառներից մեկն էր՝ տեղակայված Մուֆարկին (Սիլվան)[58] քաղաքից հարավ-արևելք։ Բաթման գետը ևս կրում է Բշերիկ անունը։ Տիգրիսի ավազանում, Դիարբեքիրի գավառի արևելյան և Սասունի Խարզան գավառակի սահմանային մասում, Տիգրիսի աջ ափին տարածվող դաշտավայրը, որը Բշերիկ գավառի տարածքում էր, ևս հայտնի է Բշերիկ անունով[59]։ Ներկայումս վերոնշյալ տեղավայրերը հայտնի են Բեշերիե-Բիշերի տարբերակներով։ Բուշշե-Բուշերիկ համադրությունն առավել վստահելի է թվում Մուսմի երկրի տեղադրությամբ։ Հասանքեյֆից հյուսիս-արևմուտք՝ Բաթման և Գարզան (Ղարզան, Խարզան) գետերի միջնատարածքում է գտնվում Մայմունիկ-Մեյմունի բնակավայրը, որը, հավանաբար, Մուսմի երկրի ժառանգորդն է[60]։ Որ Մուսմին գտնվում էր Կատմուխիի հարևանությամբ, փաստվում է նաև Թուկուլթի-Նինուրտա I-ի ժամանակին վերաբերող տնտեսական մի փաստաթղթով, որտեղ նշվում է Կատմուխի, Մուսմե, Արինի երկրներից ստացված անասնահարկի մասին[61]։ Մուսմեն Բուշշե-Բշերիկի, Կատմուխի-Կադմյան Ծավդեքի, Ալզի-Աղձնիքի, Արիննի-Արինի (Մոկքում)

և Ճահուկի տարածքներում, Ամադիայից հյուսիս, Մեհրի-Նարից հյուսիս-արևելք, նրանից ոչ հեռու։

55 Տես АВИИУ, 1։

56 Ասորեստանյան աղբյուրների Ալզի-Իլզին համապատասխանում է ուրարտական արձանագրությունների Ալզի(նի)ին, խեթական Ալշեին և հայոց Աղձնիքին (АВИИУ, 3 (ծան. 6), 4 (ծան. 3), ТУ, էջ 18-19։

57 Տես ТУ, էջ 162։

58 Հայտնի է նաև Միֆարկին, հայկ. աղբյուրներում՝ Մուփարղին, պատմ.՝ Նփրկերտ, Մարտիրոսաց քաղաք անուններով։

59 Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (ՀՀՇՏԲ), հատ. 1, Եր.,1986, էջ 713-714։

60 Տես **Սարգսյան Ա**., Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, էջ 141։

61 Տես АВИИУ, 3 (ծան. 5)։

միջև էր[62]:

Մումմե–Մայմունիկից հետո Թուկուլթի–Նինուրտան մեկ դեպքում նշում է Քաշիյարի շրջանի, մեկ այլ դեպքում Ալզի երկրի գրավման մասին: Սակայն այլ արձանագրություններից ակնհայտ է, որ Աշշուրի արքան Կատմուխիից հետո է գրավել Քաշիյարին, ապա միայն՝ Մումմին և Բուշշեն, որտեղից էլ շարժվել Ալզի:

Ալզի–Իլզին գիտական գրականության մեջ նույնացվում է Մեծ Հայքի Աղձնիք աշխարհին[63]: Այս մոտեցմանը պետք է հավելել, որ Ալզին չէր ընդգրկում Աղձնիքի արևելյան և հարավ–արևելյան գավառները: Ասորեստանի արքա Աշշուրբելկալան (Ք.ա. 1076–1059 թթ.) Աղձնիքի Ազնվաց ձոր, Տատիկ, Երխեթք, Կեթիկ գավառների տարածքը, Արզան գավառի հարավային և արևելյան շրջանները դիտում է Ուրուատրի երկրի մաս[64]: Թուկուլթի–Նինուրտա Ի–ը Արզան գավառի հարավ–արևմտյան և հարավային տարածքները դիտում է Բուշշե և Մումմե երկրների տարածք, որը սակայն չի բացառում նրանց՝ Ալզիին պատկանելու հանգամանքը: Թիգլաթպալասար Ի–ն Աղձնիքի հարավ–արևմտյան շրջանները, մինչև Կեծան գետը դիտում է Բաբխիի և նրա Խարիա երկրամասի տարածք[65], որոնք Աշշուրբելկալայի մոտ Ուրուատրիին էին պատկանում: Այսպիսով, Ալզի երկիր պետք է դիտել Գարզան (Ղարզան, Խարզան) գետից արևմուտք ընկած Աղձնիքի տարածքները:

Ալզի–Աղձնիքից հետո Թուկուլթի–Նինուրտան մտել է **Մադանի երկիրը**, որը ժամանակակից Մադենն է՝ Տիգրիսի ակունքների շրջանում[66]: Հաջորդ հիշատակվող երկրները Նիխանին և Ալայան են, որոնց տեղադրությունը խնդրահարույց է[67]: **Նիխանին** համադրելի է Բալուից հյուսիս–արևելք գտնվող Նեխրի (Նեխիրի, Ներխի, Նեխի, Նախարի) բնակավայրին, որը Արղանա–Մադեն գավառի Բալու գավառակի բնակավայրերից է[68], իսկ **Ալայան** համադրելի է Խարբերդի նահանգի Դերսիմ գավառի, Զարսանջակ (Խոզաթ) գավառակի Ալևոր բնակավայրին (Ալվոր, Հալվոր, Հալվորի, Հալվորիկ): Վերջինս գտնվում է Դերսիմից (Թունջելի) հյուսիս–արևմուտք, Խոզաթից հյուսիս–արևելք, Մնձուր գետի աջ ափին[69]: Հաջորդիվ հիշատակվող **Տեբուրգի երկիրը** համադրելի է պատմական Դերսիմին[70]: Տեբուրգի–Դերսիմ նույնականության օգտին են վկայում Բիթլիսի նահանգի Մուշի գավառի Դերսիմ գյուղի անվանումները՝ Դեսում, Դվըրսըմ, Դվևսըմ, Տերսիմ[71], որոնք Տեբուր–

62 Ս. Երեմյանը գտնում է, որ Բուշշեն և Մումմին պետք է փնտրել ինչ–որ տեղ Դիարբեքիրի և Հասանքեյֆի միջև (ՀԺՊ, հատ. 1, էջ 283 (ծան. 7)):

63 Տես ТУ, էջ 18–19: Ս. Երեմյանը այն նույնացնում է Անձիտի հետ (ՀԺՊ, հատ. 1, էջ 283 (ծան. 7)):

64 Տես АВИИУ, 19: Արշավանքի երթուղու վերաբերյալ տես **Սարգսյան Ա.**, Արդինի–Մուսասիրի տեղորոշման շուրջ, էջ 141–142, 146 (տես քարտեզը):

65 Տես АВИИУ, 10 (III, 35):

66 Ս. Երեմյանը (Ա)Մադանին նույնական է դիտում Ամիդ–Դիարբեքիրին (ՀԺՊ, հատ. 1, էջ 283 (ծան. 7)):

67 Նիխանի–Նիխանուն մասնագիտական գրականության մեջ ենթադրաբար նույնացվել է ժամանակակից Նիխան դաղի հետ՝ Տիգրիսի աջափնյակում (**Дьяконов И.**, Предыстория армянского народа, (ПАН), Ереван, Издательство АН Армянской ССР, 1968, էջ 227, ծան. 96, ТУ, էջ 154–155): Գ. Մելիքիշվիլին Ալայան հակված է նույնացնել ուրարտական արձանագրություններից հայտնի Ալաու(...) շրջանին, որը հանդես է գալիս Ուրմեուխի երկրի և Կուլիմերի քաղաքի հետ (**Меликишвили Г.**, Урартские клинообразные надписи, (УКН), Москва, 1960, էջ 416, ТУ, էջ 17):

68 Տես ՀՀՇՏԲ, հատ. 3, Եր., 1991, էջ 974:

69 Տես ՀՀՇՏԲ, հատ. 3, էջ 309: Միջնադարում հանրահայտ էր իր Ս. Կարապետի վանքով: Շրջակայքում կան ոսկու և արծաթի հանքեր, որոնք շահագործվել են հին ժամանակներից:

70 Ս. Երեմյանը Տեբուրգին տեղադրում է միջնադարյան Դաղիմայի շրջանում (այժմ՝ Դաղեմ գյուղ) (ՀԺՊ, հատ. 1, էջ 283 (ծան. 7)):

71 Տես ՀՀՇՏԲ, հատ. 2 , Եր., 1988., էջ 94:

զի–Դերսիմ անցումային ձևերն են: Բացի այդ, Տեբուրզին, Թեպուրզի ձևով, հիշատակվում է նաև Ք. ա. 14–րդ դարի խեթական աղբյուրներում՝ կապված Թուդխալիյաս III–ի դեմ Իշուվայի (հայկական՝ Ծոփք) և խեթական պետության արևելյան շրջանների ապստամբության հետ: Այս իրադարձությունները հիշատակվում են խեթական Սուպպիլուլիումաս I արքայի և միտանական Շաթիվազա թագավորի կնքած պայմանագրում. «Խաթթի երկրի մարդիկ գնացին Իշուվա: Գուրտալիսսայի մարդիկ, Արավանայի մարդիկ, Զազսա երկիրը (տարբերակ՝ «Զազզիսա»), Կալամասմա երկիրը, Թիմնա երկիրը (տարբերակ՝ «Թիմմինա»), լեռնային երկիր Խալիվան, լեռնային երկիր Կարնան, Թուրմիտայի մարդիկ, Ալխա երկիրը, Խուրմա երկիրը, Խարանա լեռնային երկիրը, Թեգարամմա երկրի կեսը, Թեպուրզիի մարդիկ, Խազգայի մարդիկ և Արմատանա երկրի մարդիկ ապստամբել էին իմ հոր ժամանակ»[72],– վկայում է Սուպպիլուլիումասը: Այս երկրների վերաբերյալ ուսումնասիրողները արտահայտել են տարբեր կարծիքներ: Դրանցից Արավանա–Արաբան–օվասի կամ Արգուվան, Կարնա–Կորան, Զազզիսա–Զազա (Զազա են կոչվում նաև Դերսիմում և Բալույում բնակվող ցեղերից դեյլեմիտների հետնորդները), Թեգարամմա–Թիլ–Գարիմու (Եփրատի և Կյուրինի միջև) համադրումները[73] ևս վերն արտահայտված Տեբուրզի (Թեպուրզի)–Դերսիմ նույնականության տեսակետի օգտին են վկայում. Տեբուրզի–Թեպուրզին Թեգարամմայի, Իշուվայի, Մադենի, Բալուի և Մնձուրի մերձակայքում էր՝ լավագույնս համընկնելով Դերսիմին:

Դերսիմից Թուկուլթի–Նինուրտա I–ն անցել է Պուրուլումզի, այնուհետ Նաիրի՝ հասնելով Եփրատի ափ: Սա թելադրում է կարծել, որ Պուրուլումզին ընկած էր Դերսիմից հյուսիս՝ մինչև Եփրատ՝ ընդգրկելով Մնձուր (Մզուր, Մուզուր) լեռնագավառը: Սակայն բազմաթիվ արձանագրություններով փաստված է, որ Պուրուլումզին հարևան էր նաև Ալզիին[74]: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ այն ընդգրկել է ոչ միայն Մնձուր–Մուզուրը, այլև Դերսիմից արևելք ընկած Պաղինը (հայոց Պաղնատունը), գուցեև՝ Բալահովտի հյուսիսային շրջանները, այսինքն՝ Արածանիի Մնձուր և Պաղին վտակների ավազանը՝ հարավում հասնելով մինչև Աղձնիք: «Պուրուլումզի» տեղանունը կարող է պահպանված լինել Պաղին (Պաղան, Պալին, Պաղանական, Պերի) և Մուզուր (Մզուր)–Մնձուր տեղանուններում[75]: Դրանք Դեր–

72 Մեջբերումը ըստ՝ **Манандян Я.**, О некоторых проблемах истории и географии древней Армении, էջ 78:
73 Նույն տեղում, էջ 78–80:
74 Տե՛ս АВИИУ, 5, 10: **Grayson A.**, Assyrian Rulers..., 21, էջ 269: Մասնագետներն այս երկիրը, ընդհանուր առմամբ, տեղադրում են Կադմուխից հյուսիս–արևմուտք, Ալզիի մերձակայքում (ТУ, էջ 161–162)՝ նույնացնելով նաև պատմական Անգեղ–տուն գավառին (ՀԺՊ, հատ. 1, էջ 283 (ծան. 7)): Հայկական լեռնաշխարհ մուշկերի ներխուժման մասին հիշատակելով՝ Թիգլաթպալասար I–ը նշում է, որ նրանք գրավել էին Ալզի և Պուրուլումզի երկրները, այնուհետ ներխուժել Կադմուխի: Հաղթություն տանելով նրանց դեմ, արքան Ալզին և Պուրուլումզին ներառել է իր տերության կազմում (АВИИУ, 10): Սա ցուցանում է մուշկերի շարժման հետագիծը. նրանք, հավանաբար, Փոքր Ասիայից գետանցել են Եփրատը և մտել պատմական Ծոփքի Մուզուր գավառի տարածք, այնուհետ նույնանուն գետի ավազանով շարժվել պատմական Ծոփքի Պաղնատուն, այնուհետ՝ Բալահովիտ գավառների տարածք և ներխուժել Աղձնիք, որից հետո իջել Կադմյան Ծավդեք: Փաստացի Պուրուլումզին հարևան էր Դերսիմին, Աղձնիքին, Նաիրի երկրին և պետք է սահմանակցեր մերձեփրատյան ավազանին, որի աջափնյա տարածքներից մուշկերը կարդ էին անմիջապես թափանցել այստեղ: Թուկուլթի–Նինուրտա I–ը, փաստացի գնացել է մուշկերի տեղաշարժի հակառակ ուղղությամբ՝ Կադմյան Ծավդեքից անցել Աղձնիք, Դերսիմի վրայով մտել է Մուզուր՝ հասնելով Եփրատի ավազան՝ Կամախի և Երզնկայի հատվածում:
75 «Պուրուլումզին» կարող է լինել Պաղին և Մ(ու)զուր տեղանունների հնագույն համակցված տարբերակը: Տեղանունը ակնհայտորեն բարդ բառ է, հավանաբար բաղկացած **Պուրուլ**+**ումզի՝** 2 արմատից: **Պուրուլ**–ից կարող է բխած լինել Պաղ/լ(ին) արմատը, իսկ **ումզի**–ից, **ու**–ի դրափոխությամբ՝ Մուզուր–Մնձուրը՝

սիմի հարևանությամբ էին՝ արևելքից և հյուսիսից: Այսպիսով, Թուկուլթի-Նինուրտա I-ը, հավանաբար, հասել է պատմական Բարձր Հայքի հարավային սահմանին, որից հետո բախվել է նաիրցիներին՝ հասնելով մինչև Մական երկրի սահմանը: Աշշուրի զորքերը, հավանաբար, Եփրատի ափ են հասել Երզնկայից (պատմական Երիզա, Արիզա, Արզանկա)[76] հարավ կամ հարավ-արևմուտք: **Պուրուլումզիի և Նաիրիի** սահմանների հստակեցման հարցում երկու փաստ չափազանց կարևոր է. Թուկուլթի-Նինուրտան նշում է, որ Ալզիի արքան փախել էր Նաիրի: Սա փաստում է, որ Ալզին հյուսիսից հարևան էր ոչ միայն Պուրուլումզիին, այլև Նաիրիին: Եվ երկրորդ՝ Ասորեստանի արքան նշում է, որ Պուրուլումզիում գրավել է այդ երկրի պաշտամունքային մեծ կենտրոնը: Արշավանքի երթուղու տրամաբանությունը հուշում է, որ Դերսիմից ասորեստանյան զորքը, հավանաբար, Եփրատի ավազան է դուրս եկել Անի-Կամախի մոտ, գրավել հայկական այս հնագույն ու հռչակավոր սրբավայրը[77], այնուհետ Եփրատով շարժվել Երզնկայի ուղղությամբ, որտեղ և բախվել է նաիրյան արքաների հետ: Այս տեսանկյունից կարևոր է գտնել Ազալզի, Շեբարդի և Մական երկրների տեղը, որոնք հիշատակվում են Նաիրիին հաջորդիվ: Կարևոր են նաև Նաիրիից հետո **Վերին ծովի** բազմակի հիշատակությունները[78], հուշելով, որ Աշշուրի զորքը Դերսիմից, Մնձուրից և Եփրատի ավազանից, հավանաբար, շարժվել է հյուսիս՝ Սև ծովի ուղղությամբ[79]: Պետք է ենթադրել, որ ասորեստանյան զորքը չի հասել Սև ծով, այլ մոտեցել է նրան մերձակա ինչ-որ երկրի հարավային սահմանին: Եվ այդ երկիրը Մականն է, որի սահմաններին իրոք հասել է Թուկուլթի-Նինուրթա I-ը, սակայն չի նշում, որ մտել է այդ երկրի տարածքը: Կարելի է ենթադրել, որ ասորեստանյան զորքը հասել է Արևելյան Պոնտոսի լեռները, հավանաբար Գյումուշհանեի մոտակայքում: Այս տրամաբանությամբ, **Մական երկիրը** պետք է ընկած լիներ Տրապիզոնի և

Մուզի>**Մուզուր**>**Մզուր**>**Մնձուր** անցումով:

76 Երզնկայի անվան տարբերակները տես ՀՀՇՏԲ, հատ. 2, էջ 235:

77 Հետաքրքիր է, որ Թուկուլթի-Նինուրտան հիշատակում է Կումմուխու երկիրը, որը գիտական գրականության մեջ հիմնականում, նույնացվում է անտիկ Կոմմագենեին (ՊՄ, էջ 122-123): Սակայն արձանագրության ձևաչափից այն կարելի է հասկանալ 2 ձևով. 1-ին՝ Կուտիից և Քաշիյարիից հետո հիշատակվում է Կումմուխու-Կոմմագենեն. 2-րդ՝ Քաշիյարիից հետո նշվում է ոչ թե Կոմմագենեն, այլ Կեմախը, հայասական Կումմախա-Կամուխան՝ Կումմուխու տարբերակով, որը հայոց Կամախն է՝ Արամազդի գլխավոր սրբավայրը: Հետաքրքիր է, որ արձանագրության շարունակության մեջ նշվում է Մադանի, Նիխանի, Ալայա, Տեբուրզի, Պուրուլումզի՝ մինչև Եփրատ հասնելու մասին (**Grayson A.,** Assyrian Rulers..., 9, էջ 251), որը, կարծեք, ցուցանում է, թե ասորեստանյան զորքը ինչպես է դուրս եկել Եփրատի ափ, ոչ թե Կոմմագենեի, այլ՝ Կամախի մոտ: Դերսիմից Վերին Եփրատ հասնելու երկու հավանական ճանապարհ կա, մեկը Մնձուրի լեռնանցքով տանում է Կամախ, մյուսը Մնձուրի լեռների արևելյան կողմում առկա 2 լեռնանցքներով տանում է Երզնկա: Համենայն դեպս, մինչև Տեբուրզի-Դերսիմ հասնելն ասորեստանյան զորքը չի մտել Պուրուլումզի. դա նշանակում է, որ այդ նշանավոր սրբավայրը Դերսիմից հյուսիս էր:

78 Տես АВИИУ, 9, **Grayson A.**, Assyrian Rulers..., 4, էջ 243, 26, էջ 279

79 Գիտության մեջ տիրապետում է այն կարծիքը, որ Թուկուլթի-Նինուրտա I-ի և Թիգլաթպալասար I-ի հիշատակած Վերին ծովը Վանա լիճն է (տես, օրինակ, **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, էջ 349), որը համոզիչ չէ: Թիգլաթպալասար I-ն իրոք հասել է մինչև Տայք և Բարձր Հայք, իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը Դերսիմից և Մնձուրից, հավանաբար, անցել է Բարձր Հայք: Թերևս, նրանք կարող են հասած չլինել ընդհուպ սևծովյան ափ, սակայն ակնհայտորեն գիտեին, որ մտել են կամ մոտեցել են տարածքների, որոնց հյուսիսում Սև ծովն էր: Թիգլաթպալասար I-ը, գրավելով Նաիրին, նշում է «...Նաիրի երկիրը՝ Թումմեից մինչև Դայանեի և Վերին ծով», այլ տարբերակում՝ «...Թումմից մինչև Դայանի...Խաբխի երկիրը մինչև Մեծ ծովը...». Թումմեն, որ համապատասխանում է ժամանակակից Թխումին (Զուլամերկից 30 կմ հարավ), գտնվում էր Խաբխի երկրում, Դայանեին Հայոց Տայքն է, որ գտնվում էր Սև ծովից հարավ (այս արշավանքի երթուղու մասին տես **Սարգսյան Ա.**, Թիգլաթպալասար I-ի մ.թ.ա 1112 թ. նաիրյան արշավանքի երթուղին, ՊԲՀ, 2002, 3 (161), էջ 215-224): Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը բազմաթիվ անգամ հիշատակում է, որ Նաիրիից հետո հասել է Մական երկրի սահմանը, այլ տարբերակներում՝ մինչև Վերին ծով, որի ափի երկրներին հարկատու է դարձրել:

Գյումուշհանեի կամ Տրապիզոնի ու Սատաղի միջև: Անտիկ շրջանում Տրապիզոնից Սատաղ տանող ճանապարհային կայաններից մեկը, որ մոտ էր Տրապիզոնին, կոչվում էր Մագնանա[80]: Այն, հավանաբար, համապատասխանում է ներկայիս Մաչկան (Մաչկա, Մաչխա) գավառին՝ համանուն կենտրոնով: Մական անունը միանգամայն համադրելի է Մագնանա և Մաչկան տեղանուններին: Թե, որքան էր տվյալ ժամանակում Մականի տարածքն իջնում հարավ, դժվար է փաստել: Ինչ վերաբերում է **Ազալգի և Շեբարդի** տեղավայրերին, ապա վերջիններս ևս Նաիրիի տարածքում էին և հիշատակվում են Նաիրի ներխուժելուց հետո: Կարելի է կարծել, որ այս երկու երկրները գտնվում էին Եփրատի և Մականի միջև: Այս մոտեցմամբ Ազալգին կարող է համապատասխանել Արիզա-Երիզա-Երզնկային: Հյուսիս շարժվելով՝ ասորեստանյան զորքը կարող էր դուրս գալ Ս. Գրիգորի լեռնանցքի և Սեպաքար (Սպիկոր) բնակավայրի շրջակայք՝ մոտենալով Արևելյան Պոնտոսի լեռներին: Շեպարդին, կարծում ենք, պետք է փնտրել այս լեռնանցքի մերձակայքում: Փաստացի Թուկուլթի-Նինուրտա Ի-ն երկու անգամ է դուրս եկել Եփրատի ավազան, ինչպես և նշում է՝ մեկ անգամ՝ Նաիրիի երկրների տարածքում, մյուս դեպքում՝ Խաթթիի տարածք մտնելիս, որտեղից գերել է 28800 խեթական ռազմիկների[81]: Ասորեստանի արքան Խաթթիի տարածք կարող էր անցնել կամ Քաշիյարի շրջանը նվաճելուց հետո, մինչև Շուբարի և Նաիրի արշավելը՝ կանխելու համար խեթերի աջակցությունը նրանց, կամ Շուբարին և Նաիրին գրավելուց հետո՝ կանխելով վերջիններիս աջակցությունը խեթերին: Մական երկրի սահմանը հասնելուց հետո, ասորեստանյան զորքը, ապահովության համար, կարծում ենք վերադարձել է գրեթե նույն ճանապարհով: Հասնելով Դերսիմ՝ նրանք Բերդակ-Խարբերդ-Տոմիսա երթուղով կարող էին գետանցել Եփրատը և վերադառնալ Ասորեստան:

Ակնհայտորեն ասորեստանյան այս արքայի արձանագրություններում հիշատակվող Նաիրին Վանա և Ուրմիա լճերի ավազանում չէր, այլ Վերին Եփրատի ավազանում՝ Բարձր Հայքի տարածքում[82], հավանաբար հյուսիսում հասնելով մինչև Արևելյան Պոնտոսի լեռները՝ ժամանակակից Մաչկանից հարավ, իսկ հարավում՝ Մնձուր (Մզուր, Մուզուր), և Պաղինի ու Բալուի արևելյան սահմաններով ձգվել մինչև Աղձնիք:

Նկատենք նաև, որ խեթա-ասորեստանյան Նիխրիյայի հայտնի ճակատամարտը տեղի է ունեցել Թուկուլթի-Նինուրտա Ի-ի նույն այս արշավանքի ընթացքում: Չնայած այստեղ Նիխրիյայի ճակատամարտն անվանապես չի հիշատակվում, սակայն այս արքայի տարեգրություններում Խաթթիի

80 Տես **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 117 (ծան.2):

81 Պետք է նկատի ունենալ մեկ այլ սցենար ևս: Հնարավոր է, որ Թուկուլթի-Նինուրտա Ի-ը Եփրատ ասելով նկատի ունի Արածանին, և զորքի առաջխաղացումը սահմանափակված լինի Արածանիի և Վերին Եփրատի միջնատարածքով: Աշշուրի արքան հնարավոր է չափազանցրել է իր ձեռքբերումները: Ինչպես ուսումնասիրողները նկատել են (օր. Ա. Քոսյանը), 28800 գերված ռազմիկների թիվը նրա հոր՝ Սալմանասար Ի-ի գերած խանիգալբատյան ռազմիկների թվի (14400) կրկնակին է: Բացի այդ, Շուբարի-Խանգալբատի ավերած 180 բնակավայրերի մասին նշում է նաև Սալմանասար Ի-ը, և որդին կարծեք փորձում է կրկնել ու բազմապատկել հոր սխրանքները:

82 «Նաիրյան երկրներ» ասելով Թուկուլթի-Նինուրտա Ի-ը, հավանաբար, նկատի է ունեցել Հայասա-Ազզին, որը թույլ կենտրոնացված պետություն էր, և նրա տեղական կառավարիչները կարող էին դիտվել որպես արքաներ: Նրա հաջորդներից Թիգլաթպալասար Ի-ը ևս ներխուժել էր Բարձր Հայքի տարածք և այն դիտում էր նաիրյան երկրամաս (**Սարգսյան Ա.,** Թիգլաթպալասար Ի-ի մ.թ.ա. 1112 թվականի նաիրյան արշավանքի երթուղին, էջ 221, ծան. 58):

տարածք ասորեստանյան զորքի ներխուժման մասին որևէ այլ վկայության բացակայությունը թույլ է տվել այս իրադարձությունը համադրելու Թուկուլթի-Նինուրտա I-ի՝ Ուգարիտի արքա Ամմուրապիին ուղված նամակում հիշատակվող Նիխրիյայի ճակատամարտի հետ[83]:

Նիխրիյայի ճակատամարտի մասին տեղեկություններ կան նաև խեթական աղբյուրներում՝ Իսուվայի արքային ուղղված Թուդխալիյաս IV-ի նամակում: Ըստ այդ աղբյուրների՝ ասորեստանյան զորքի առաջխաղացումը կանխելու նպատակով խեթերն իրենք են նախահարձակ եղել՝ փորձելով թիկունքից հարվածել ասորեստանյան ուժերին[84]: Արշավանքը ծրագրված էր կազմակերպել կախյալ Իսուվայի հետ համատեղ: Ինչպես հայտնի է Ուգարիթյան նամակից, Խաթթի արքա Թուդխալիաս IV-ը վերջնագիր է ներկայացնում Ասորեստանին, միաժամանակ խեթական զորքը մտնում է Նիխրիյա: Հավանաբար Ասորեստանի արքան ինքն է նպատակ ունեցել գրավելու Նիխրիյան: Ուգարիտյան նամակում հաղորդվում է, որ երբ խեթական զորքը մտել է քաղաք, Թուկուլթի-Նինուրտան իր զորքը Նիխրիյայի մոտից հետ է քաշել Սուրրա քաղաքը[85] հավանաբար պատրաստվելու վճռական ճակատամարտի: Սակայն երբ խեթական զորքը Նիխրիյայում բախվում է ասորեստանցիների հետ, Իսուվայի արքան չի ժամանում ճակատամարտի վայր՝ նախապես բանակցություն վարելով հակախեթական ինչ-որ ուժերի հետ[86]: Թուկուլթի-Նինուրտա I-ը հաղթում է, որից հետո անցնելով Եփրատը, ասպատակում խեթական սահմանամերձ շրջանները: Արդյունքում, ինչպես ենթադրվում է, խեթերի հսկողության տակից դուրս են գալիս ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող Ալզին և Իսուվան[87]:

Նիխրիյան ուսումնասիրողների կողմից տեղադրվել է Խաբուրի կամ Բալիխի վերին հոսանքի շրջանում, Վերին Տիգրիսի հովտում[88], նույնացվել է Էգիլի[89] (հայկ.՝ Անգղ) կամ Նփրկերտի հետ[90]: Ուրարտական աղբյուրների Նիխիրիանին Արմե երկրի կենտրոնն էր[91], իսկ Արմեն, ակնհայտորեն, ընդգրկում էր ներկայիս Սիլվանի (պատմ.՝ Նփրկերտ) տարածքը, նաև Սասունի լեռնագավառը[92]: Արմե երկիրը Ալզի-Աղձնիքի տարածքում էր[93]: Իսկ Թուկուլթի-Նինուրտա I-ը Մումմե-Մայմունիկից հետո, անկասկած, շարժվել է հյուսիս-արևմուտք. ահա Բաթմանի միջին հոսանքում, Նփրկերտի մոտակայքում նա կարող էր բախվել խեթական բանակի հետ, այնուհետ ներխուժել Ծոփք և շարժվել ավելի հյուսիս: Այնտեղից Աշշուրի արքան վերադարձել է Արածանիի ստորին ավազան, հավանաբար Բերդակ-Խարբերդ-Տոմիսա երթուղով հասել Եփրատ, գետանցել այն, ասպատակել խեթական

83 Տես **Քոսյան Ա.**, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 19-20:
84 Տես նույն տեղում, էջ 75:
85 Տես նույն տեղում, էջ 205 (ծան. 276):
86 Տես նույն տեղում, էջ 74-76
87 Տես նույն տեղում, էջ 19-20:
88 Տես նույն տեղում, էջ 191 (ծան. 22):
89 Տես **Капанцян Г.**, Хайаса-колыбель армян, Ереван, 1947, էջ 198-199:
90 Տես **Пиотровский Б.**, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 9, 20, 27:
91 Տես ТУ, էջ 39:
92 Թիգլաթպալասար I-ը Հայկական Տավրոսի այս հատվածը բնորոշում է որպես Արումա լեռներ (АВИИУ, 10 (II, 63, III, 73)), որը նույնական է «Արմե» անվանաձևի հետ:
93 Չի բացառվում, որ ողջ Ալզին՝ շրջակա տարածքներով, մինչև Վանա լճի արևմտյան շրջանները, համապատասխաներ հնագույն Արմանի երկրին, իսկ հետագա շրջանի Արմե, Արումա, Ուրմե, Արամ սեպագրական տեղանունները հանդիսանային նրա ժառանգորդները:

շրջանները[94]: Խեթերը, Ալզիի դաշնակցային ուժերի պարտությունից հետո, փորձել են Իսուվայի հետ համատեղ կասեցնել ասորեստանյան զորքի առաջխաղացումը և թույլ չտալ, որ գետանցեն Եփրատը: Սակայն, Իսուվայի դավաճանության պատճառով, նրանք պարտություն են կրել: Ծոփացիները, կարծեք, գերադասել են իրենց բուն տարածքները փրկել՝ հանձնվելով ասորեստանյան ողորմածությանը:

Մեկ այլ սցենար ևս հնարավոր է: Թուկուլթի–Նինուրտան Մադանի–Մադենից հետո հիշատակում է Նիխանի երկիրը, որը համադրելի է ժամանակակից Նեխրի–Նեխիրի բնակավայրին՝ տեղակայված Բալուից հյուսիս–արևելք: Այն հիշեցնում է Նիխրիյա–Նիխրիյաինին[95]: Պետք է նկատել, որ ասորեստանյան բանակի և խեթերի միջև ճակատամարտը տեղի է ունեցել ինչ–որ տեղ Ալզիի, Մադանիի, Տեբուրզիի, Պուրուլումզիի, Նաիրիի, Իսուվայի և Խաթթի մոտակայքում: Այս տեսանկյունից Նիխանի–Նիխրիյա–Նեխրի համադրումը հավանական է թվում: Հետաքրքիր է, որ Արղանա–Մադեն գավառի Բալու գավառակում, Բալու բնակավայրից հարավ, Բալուի և Մադենի միջև կա Սրին (Սիրին) անունով բնակավայր՝ համանուն լեռնագագաթով[96]: Այն համադրելի է Սուրրա տեղավայրին, որտեղ Նիխրիյայից հետ քաշվելով, դիրքավորվել է Թուկուլթի–Նինուրտա I–ի բանակը[97]: Նկատենք նաև, որ Ալզին իր դաշնակցային ուժերով էր դուրս եկել ասորեստանյան զորքի դեմ, իսկ խեթերը՝ միայնակ, փորձելով ներքաշել Իսուվային: Դա փաստում է, որ Աշշուրի արքան երկու խոշոր ճակատամարտեր է տվել Կատմուխիից մինչև Ալայա ընկած հատվածում, այնուհետ շարժվել հյուսիս: Եվ Նիխրիյայի առավել հավանական տեղադրությունը պետք է լինի Ալզիից արևմուտք կամ հյուսիս–արևմուտք՝ Ալզիի և Իսուվայի սահմանների մերձակայքում: Այստեղ խեթական զորքը, Արածանիի ավազանով, հավանաբար շարժվել է դեպի արևելք և փորձել հանկարծակի հարվածով հետ մղել ասորեստանցիներին, սակայն մտահղացումը ձախողվել է: Նիխրիյայի մոտ հաղթելուց հետո ասորեստանյան բանակը խորացել է Իսուվայի տարածք՝ շարժվելով հյուսիս–արևմուտք, հասնելով Դերսիմ և Մնձուր: Շուբարին և Նաիրին հնազանդեցնելուց հետո ասորեստանյան բանակի թիկունքն ապահով էր, և վերադարձի ճանապարհին այն կարող էր գետանցել Եփրատը և ասպատակել խեթական մերձակա շրջանները:

Այսպիսով, Թուկուլթի–Նինուրտա I–ի արշավանքի երթուղին՝ դեպի կուտիների, շուբարեցիների և Նաիրի երկրներ, գծագրվում է բավականին հստակ, փաստելով, որ ասորեստանյան զորքն անցել է պատմական Կորդուքի, Կադմյան Ծավդեքի, Տուր–Աբդինի լեռների, Աղձնիքի, Արղանա–Մադենի տարածքներով, հասել Բալուի մոտակայք, այնուհետև՝ Դերսիմ և,

94 Լ. Գոլովլևան կարծում է, որ Թուկուլթի–Նինուրտա I–ը Տիգրիսի ակունքների շրջանից անցել է Եփրատի ավազան և գետանցել այն՝ առանց Իսուվա–Ծոփք մտնելու, և դա հիմնավորում է՝ այս երկիրը չհիշատակելու փաստով (**Головлева Л.**, Царство Алзи во второй половине II тыс. до н. э., էջ 86 (ծան. 71)): Սակայն բաց է մնում, թե որտե՞ղ էր, այս պարագայում Նաիրին՝ իր 40–43 շրջաններով: Տեբուրզի–Դերսիմ համադրելիությունը և Վերին ծովի բազմակի նշումներն ապացուցում են, որ այս արքան մտել է Իսուվա–Ծոփքի տարածք, գրավել նրա մի քան երկրները, մասնավորապես՝ Տեբուրզին և Պուրուլումզին, այնուհետ անցել Նաիրի՝ հասել Եփրատի ավազան և շարժվել ավելի հյուսիս:

95 Այս տեղանունների նմանությունը նկատել է նաև Ս. Երեմյանը, սակայն դրանք համադրել է ժամանակակից Նիխան դաղի հետ՝ Տիգրիսի աջափնյակում (**Дьяконов И.**, ПАН, էջ 227 (ծան.96)):

96 Տես ՀՀՇՏԲ, հատ.4, էջ 692:

97 Տես **Քոսյան Ա.**, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 205 (ծան. 276):

հավանաբար Արածանիի աջակողմյան վտակ Մնձուրի ավազանով ներխուժել Բարձր Հայքի տարածք, հասել Վերին Եփրատի ավազան, բախվել Նաիրիի արքաներին, հավանաբար հասնելով մինչև Արևելապոտնական լեռները, իսկ վերադարձին գետանցել է Եփրատը և կրկին բախվել խեթերի հետ: **Ակնհայտորեն, ասորեստանցիները, այս վաղագույն շրջանում Նաիրի էին անվանում խեթական աղբյուրներից հայտնի Հայասա-Ազզի տարածքը՝ ընկած Արևելապոտնական լեռներից հարավ՝ մինչև Մնձուր, Պաղին, Բալու և Աղձնիք:**

Աշշուրի արքան առնվազն 5 խոշոր ճակատամարտեր է տվել իր անցած ճանապարհին. **առաջինը**՝ Ցաուրի լեռներում (Կորդուքի հարավային մատույցներում)՝ կուտիական դաշնակցային զորքի դեմ՝ բաղկացած բաբխեցիներից և ուկումանեցիներից, **երկրորդը**՝ Ալզիի և նրա դաշնակից շուբրիական թագավորների դեմ՝ ինչ-որ տեղ Աղձնիքի տարածքում՝ Բշերիկից հյուսիս-արևմուտք կամ արևմուտք՝ մինչև Մադեն: **Երրորդ** խոշոր ճակատամարտը տեղի է ունեցել խեթերի դեմ՝ Նիխրիյայի մոտ, հավանաբար Արածանիի աջափնյակում, Բալուից հյուսիս-արևելք: **Չորրորդ** ճակատամարտը տեղի է ունեցել Նաիրիի 40 կամ 43 արքաներից բաղկացած դաշնակցային զորքի դեմ՝ Եփրատի ավազանում, Մնձուրյան լեռները հաղթահարելուց հետո, հավանաբար Երզնկայի մոտակայքում: **Հինգերորդ** ճակատամարտը տեղի է ունեցել Եփրատի աջափնյակում, հավանաբար Կոմմագենեի տարածքում, որի արդյունքում խեթերի կազմալուծված ուժերն ուղղակի գերեվարվել են:

Ասորեստանյան այս աննախադեպ արշավանքն ուներ ռազմաքաղաքական և տնտեսական մեծ նշանակություն: Ըստ էության Միտանիի ժառանգության համար խեթերի հետ ընթացող շուրջ մեկդարյա պայքարն ավարտվեց Ասորեստանի հաղթանակով: Թուկուլթի-Նինուրտա I-ը հսկողություն հաստատեց Կորդուքի շինանյութերով հարուստ շրջանների, Մոկքի, Արղանա-Մադենի, Դերսիմի, գուցե և Գյումուշխանեի հարուստ մետաղական հանքավայրերի նկատմամբ: Սակայն հաջողությունները ժամանակավոր բնույթ էին կրում. Հայկական լեռնաշխարհի հնագույն տերերն ամենևին էլ հլու-հնազանդ չէին Խաթթիի և Աշշուրի տիրակալներին, և վերջիններս, մինչև Ուրարտուի կազմավորումն ու դրանից հետո, դեռ բազում անգամներ պետք է մագլցեին հայոց լեռները՝ փորձելով տիրել նրա հարստություններին:

Արտակ Ս. Սարգսյան – հեղինակ է 7 գիտական զեկույցների և թեզիսների, 2 գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են՝ հայոց պատմության հնագույն շրջանը, սեպագրական աղբյուրներում հիշատակվող Հայկական լեռնաշխարհի տեղավայրերի և Ք. ա. II-I հազարամյակի ասորեստանյան արքաների՝ դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների երթուղիների ուսումնասիրությունը:


ԹՈՒԿՈՒԼԹԻ-ՆԻՆՈՒՐՏԱ Ի-Ի (Ք.Ա.1243-1207 ԹԹ.)
ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿՈՒՏԻ, ՇՈՒԲԱՐԻ ԵՎ ՆԱՀՐԻ
Քարտեզի հեղինակ՝ Ա. Սարգսյան
Տրապիզոն
Մակյան
Գյումուշհանե
Եղգնկա
Սեպաքար
Կամախ
Մնձուր
Ալեոր
Դերսիկ
Ռեդիյակ
Ռադին
Նեվրի
Բալու
Խարբերդ
Տոմիսա
Ամիտ
Սիրին
Ցոմբ լիճ
Մարդին
Արզոն
Էրզիզ
Ամիդ
Կապաբա
Թրախոդ
Ջնաբ
Էլոփատ
Ամատ
Թոդրիկ
Դեռդամուսա
Սավոյ
Սոր
Միդյաթ
Մարդին
Մծբին
Նիբլ
Նզիրկոտ
Սաասուն
Գզեկ
Ալոգան
Ռեղվան
Մայմուրիկ
Ջեզ
Էրուխ
Շիրոնակ
Ամիդ
Ամատ
Սուր
Սաասուն
Գզեկ
Ալոգան
Ռեղվան
Մայմուրիկ
Էրուխ
Շիրոնակ
Մեկ
Խիզան
Դաառվան
Կոտում
Թիթլիս
Սուզ
Սոզդ
Միջան
Արին
Առնոս
Թաղ
Մեկ
Ամատ
Ջեզ
Ջեզ
Ջեզ

Summary

CAMPAIGN OF ASSYRIAN KING TUKULTI–NINURTA I (1243–1207 BC) KUTI, ŠUBARI AND NAIRI

Artak S. Sargsyan

Key words – Countries of Nairi, country of Kuti, country of Šubari, battle of Nihriya, Katmuhi (Kadmian Tsavdek), Alzi–Agdznik, Teburzi–Dersim, Hayasa–Azzi, mountains of Muzur, basin of the Euphrates, Makan (Magnana, Machkan), Upper Sea, Musru–Arinni (Mijas, Arin).

The article explored the route of the campaign of Aššur king Tukulti–Ninurta I, in the first year of his rule, on Kuti, Šubari and Nairi. As a result, it was found that the Assyrian army reached Korduk, through the basin of the Great Zab or the Tigris, and captured the Kutians countries Ukumani (surroundings of Komana and Gefshe), Mehri (Mehri Nar), Šarnida (Shirnak or Shahidinan), Elhunia (Eruh) and Babhi (area of Tigers merger). Then the army of Aššur passed the Šubarians countries Katmuhi (Kadmian Tsavdek), Kašiiari mountainous region (Tour–Abdin), Mummi (Maymunik), Bušše (Bsherik), Alzi (Agdznik), Madani (Maden), Surra (Siri, between Maden and Balu), Nihani (Nexri, north–east of Balu), Alaia (Alevor, north–east of Hozat), Teburzi (Dersim), Purulumzi (in the basins of the Pahin and Mzur rivers)) and captured the great sanctuary Purulumzi (possibly Kamah). Then the Assyrians reached the Upper Euphrates, between Kamah and Erznka, and entered into Nairi. There they faced 40 (43) kings of Nairi, reached the southern border of the country Makan (comparable to ant. Magnana, mod. Machkan), located on the shores of the Upper Sea (Black Sea) – between Trabzon and Gyumushkhane. In the country of Nairi, the Assyrians also occupied the Azalzi (probably Ariza–Eriza–Erznka) and Šepardi countries. On the way back, they probably crossed the Euphrates near Tommisa, entered Kommagene, captured about thirty thousand Hittite soldiers and returned to Assyria. It is obvious that the Assyrians, in this early period, under the "countries of Nairi" meant the territory of Hayasa–Azzi, known from Hittite sources, located in the south of the East–Pontian mountains, towards Mzura, Pahin, Palu and Agdznik. King Aššur on the path of the parokha gave at least five major battles–the first, in the mountains of Iauri (on the southern slopes of Korduk), against the allied forces of the kutians, the second against Alzi, and the allied forces of the Šubarian kings (somewhere in Agdznik, north–west or west of Bsherik, between him and Maden). The third major battle took place near Nihriya, probably on Nfrkert or on the right bank of the Aratsani, north–east of Balu (near Nexri): The fourth battle took place against the allied forces of Nairi, in the Upper Euphrates basin, probably after overcoming the mountains of Mndzur, possibly, near Erznka. The fifth collision occurred again with the Hittites, on the right bank of the Euphrates, probably in the Kommagene area.

This unprecedented Assyrian invasion had great military–political and economic significance. Tukulti–Ninurta I temporarily controlled the districts of Korduk, Moks (Musru–Arinni), Arghana–Maden, Dersim and, possibly, Gumushkane-territory with rich construction materials and metal mines.

Резюме

ПОХОД АССИРИЙСКОГО ЦАРЯ ТУКУЛТИ–НИНУРТЫ I (1243–1207 ГГ. ДО Р.Х.) НА КУТИ, ШУБАРИ И НАИРИ

Артак С. Саргсян

Ключевые слова – страны Наири, страна Кути, страна Шубари, сражения Нихрии, Катмухи (Кадмийский Цавдек), Алзи–Агдзник, Тебурзи–Дерсим, Хайаса–Аззи, горы Музур, бассейн Евфрата, Макан (Магнана, Мачкан), Верхнее море, Мусру–Аринни (Миджас, Арин).

В статье исследован маршрут похода царя Ашшура Тукулти–Нинурты I на Кути, Шубари и Наири в первый год его правления. В результате было выяснено, что ассирийская армия дошла до Кордука через бассейн Большого Заба или Тигра и захватила кутийские страны Укумани (окрестности Команы и Гефше), Мехри (Мехри Нар), Шарнида (Ширнак или Шахидинан), Элхуния (Эрух) и Бабхи (район слияния Тигров). Потом армия Ашшура перешла через шубарейские страны Катмухи (Кадмийский Цавдек), горную облость Кашияри (Тур–Абдин), Мумми (Маймуник), Бушше (Бшерик), Алзи (Агдзник), Мадани (Маден), Сурра (Сири, между Маденом и Балу), Нихани (Нехри, к северо–востоку от Балу), Алайа (Алевор, к северо–востоку от Хозат), Тебурзи (Дерсим), Пурулумзи (в бассейнах рек Пахин и Мзур)) и захватила большое святилище Пурулумзи (возможно, Камах). После чего ассирийцы дошли до Верхнего Евфрата между Камахом и Ерзнкой и вошли в Наири. Там они столкнулись с 40 (43) царями Наири, достигли до южной границы страны Макан (сравнимо с антич. Магнана, совр. Мачкан), расположенной на берегу Верхнего моря (Черное море) между Трабзоном и Гюмушханой. В стране Наири ассирийцы также оккупировали страны Азалзи (наверно Ариза–Ериза–Ерзнка) и Шепарди. На обратном пути они, вероятно, пересекли Евфрат возле Томмисы, вошли на территорию Коммагене, захватили около тридцати тысяч хеттских солдат и вернулись в Ассирию. Очевидно, что ассирийцы в этот ранний период под «странами Наири» имели в виду территорию Хайаса–Аззи, известной из хеттских источников, расположенной к югу от Восточно–Понтийских гор до Мзура, Пахина, Палу и Агдзника. Король Ашшура в ходе похода дал по крайней мере пять крупных сражений: первое – в горах Яури (на южных склонах Кордука) против союзных войск кутиев, второе – против Алзи и союзных войск шубарейских царей (где–то в Агдзнике, северо–западнее или западнее от Бшерика, между ним и Маденом). Третья крупная битва произошла возле Нихрии, вероятно,

Պատմա-հին դարաշրջան 2 հատոր, համար (66), 2019

под Нфркертом или на правом берегу Арацани, к северо–востоку от Балу (недалеко от Нехри). Четвертая битва была против союзных войск Наири в бассейне Верхнего Евфрата, вероятно, после преодоления гор Мндзура, возможно, возле Ерзнка. Пятое столкновение снова произошло с хеттами на правом берегу Евфрата, вероятно, в районе Коммагене.

Это беспрецедентное ассирийское вторжение имело большое военно–политическое и экономическое значение. Тукулти–Нинурта I временно контролировал районы Кордука, Мокса (Мусру–Аринни), Аргана–Мадена, Дерсима и, возможно, Гюмушханы – территории, богатые строительными материалами и металлическими рудниками.

REFERENCES

1. **Adonc N**., Hayastani patmutiun, Ye'r., 1972 **(in Armenian).**
2. **Adonc N.,** Hayastany Hustinianotsi darashrdganum, Ye'r., 1987 **(in Armenian).**
3. **Arutjunjan N**., Biainili(Urartu), Ye'r., 1970 **(in Russian).**
4. **Arutjunjan N**., Toponimika Urartu(TU), Ye'r., 1985 **(in Russian).**
5. **Djakonov I.,** Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu (AVIIU), VDI, N2, 1951 **(in Russian).**
6. **Djakonov I.,** Predistoria armjanskogo naroda, (PAN), Ye'r., Izdatelstvo AN Armianskoi SSP, 1968 **(in Russian).**
7. Hay jogh'ovrdi parmutiun, hat. 1, (HJP), pat. xmb. S. Yeremyan, Ye'r., 1971 **(in Armenian)**.
8. Hay joghovrdi patmutiuan qrestomatia, hat. 1, (HJPQ), Ye'r., 1981 **(in Armenian).**
9. Hayastani yev' harakic sh'rjanneri tegh'anunneri bararan (HHSHTB), hat. 1-4, 1986-1998 **(in Armenian)**.
10. **Golovleva L**., Carstvo Alzi vo vtoroj polovine II tys. do. n. e., Drevnii vostok, Ye'r., 1978, N3, eg 71-87 **(in Russian).**
11. **Kapancjan G**., Xajasa-kolybel armjan, Ye'r., 1947 **(in Russian).**
12. **Manandjan Y**., O nekotoryx problemax istorii i geografii drevnei Armenii, Ye'r., 1956 **(in Russian)**:
13. **Melikishvili G**., Nairi-Urartu, (N-U), Tbilisi, 1954 **(in Russian)**.
14. **Melikishvili G**., Urartskie klinoobraznie nadpisi, (UKN), Moskva, 1960 **(in Russian).**
15. **Movsisyan A**., Barepash't arqaneri ashxarhakalutyunə, Ye'r., 1997 **(in Armenian)**.
16. **Movsisyan A**., Hayastanə Qristosic araj errord hazaramyakum, Ye'r., 2005 **(in Armenian).**
17. **Piotrovskij B**., O proisxozhdenii armjanskogo naroda, Ye'r., 1946 **(in Russian)**:
18. **Qosyan A**., Asorestanə yev Haykakan lernashxarhi erkrnerə m.t.a. XIII dari erkrord kesin, Patma-banasirakan handes, 2-3, Ye'r., 1999, ej 222-231 **(in Armenian)**.
19. **Qosyan A**., Merdz'avorarevelyan c"gnajamə yev' Haykakan lernashxarhə, Ye'r., 1999 **(in Armenian)**.
20. **Sargsyan A**., Ardini-Musasiri tegh'oroshman shurdg, MMAEJ, XIX, Ye'r., 2000, 140-152 **(in Armenian)**.
21. **Sargsyan A**., T'iglat'palasar I-i m.t'.a. 1112 t'. Nairyan arsh'avanqi ertujh'in, Patma-banasirakan handes, PBH, 2002, 3(161), ej 215-224 **(in Armenian)**.
22. **Sargsyan D**., Daiaeni-Diauxi petutyan gravac' taratsqy ev bnakchutyan haykakan tsagumy, “Lraber hasarakakan gitutyunneri”, Ye'r., 2003, N2, ej 168-170 **(in Armenian)**.

23. **Xachatrjan V**., Xaijastsi, “Lraber”, Ye'r., 1972, N8, ej 31-41 **(in Russian)**.
24. **Xachatrjan V**., Xaijasa i Nairi, HSSH GA “Lraber”, Ye'r., 1973, N11, ej 37-47 **(in Russian)**.
25. **Xachatrjan V**., Nairi i Armenia, “Lraber hasarakakan gitutiunneri”, Ye'r., 1976, 8(59). ej 59-72 **(in Russian)**.
26. **Xachatrjan V**., Hajastany m.t.a. XV-VII darerum (Hayots hin patmutjun), Ye'r., 1998, ej 81-83 **(in Armenian)**.